Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի
ղեկավարի
2022թ. հուլիսի 28-ի թիվ 66-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի «Գյուղաշխատանքներ և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի (այսուհետ՝ Տնօրեն) թափուր պաշտոն զբաղեցնելու համար **2022 թվականի օգոստոսի 30-ին, ժամը՝ 11:00-ին,** Տաթևի համայնքապետարանի շենքում /գ. Շինուհայր, Մայրուղի 14/ կանցկացվի մրցույթ՝ Տաթև համայնքի «Գյուղաշխատանքներ և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն
2) համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ
3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր)
4) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
5) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն
6) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
7) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ
8) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
9) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն

Դիմող քաղաքացիները Տաթևի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում
2) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի
3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին
4) ինքնակենսագրություն
5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները
6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից
7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը՝ 09:00-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ **2022 թվականի օգոստոսի 18-ը,ժամը՝ 18:00-ն**:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ ստանալու և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Տաթևի համայնքապետարանի աշխատակազմ /գ. Շինուհայր, Մայրուղի 14, հեռ. /094224266/:

Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մ. Թևոսյան